Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները

քվեարկության օրը

(1 հոկտեմբերի)

07:00 – 08:00 ժամ

- ☐ Ընտրական տեղամասը բացելիս՝ հանձնաժողովի քարտուղարից ստացեք քվեարկության օրվա Գրառումների գիրքը, Գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և ցուցադրական արձանագրությունները

- ☐ Ցուցադրական արձանագրությունները փակցրեք ընտրական տեղամասում, աչքի ընկնող տեղում

- ☐ Գրառումների գրքի առաջին և երկրորդ էջերին ամրագրեք ընտրական տեղամասը բացելիս քվեարկության շենքում գտնվելու իրավասու անձանց (հանձնաժողովի անդամների, դիտորդների, ներկայացուցիչների) անունը, ազգանունը և խնդրեք նրանց քվեարկության շենքում գտնվելը հաստատեն Գրառումների գրքում ստորագրությամբ (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.2.ա)

- ☐ Քվեարկության օրվա Գրառումների գրքի 5-րդ էջում արտացոլեք հանձնաժողովի կնիքի նմուշը, որի վրա կատարված է առաջին հատվածախուցը (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.2.բ)

- ☐ Հանձնաժողովի անդամների շրջանում գործառույթների բաշխման համար անցկացված վիճակահանության արդյունքները մտցրեք քվեարկության օրվա Գրառումների գրքի 3-րդ էջում (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.2.վ)

- ☐ Բողոքների գրանցման գործընթացը դիտարկելու նպատակով անցկացված վիճակահանության արդյունքում բացահայտված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների տվյալները մտցրեք քվեարկության օրվա Գրառումների գրքի 3-րդ էջում

- ☐ Համընդհանուր ընտրացուցակում, հատուկ ցուցակում գոյություն ունեցող ընտրողների թվաքանակությունը ամրագրեք Գրառումների գրքի 6-րդ էջում և ցուցադրական արձանագրություններում (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.9)

- ☐ Ստացած ընտրական քվեաթերթիկների թվաքանակը ամրագրեք Գրառումների գրքի 6-րդ էջում և ցուցադրական արձանագրություններում (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.9)

- ☐ Քվեատուփերի զմռսման ժամանակը, քվեատուփերի զմուռսի անհատական համարները մտցրեք Գրառումների գրքի 4-րդ էջում

- ☐ Քվեարկության օրվա Գրառումների գրքի 5-րդ էջին արտացոլեք յուրաքանչյուր գրանցողի կնիքի նմուշը, որի վրա արված է առաջին հատվածախուցը (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.8)

- ☐ Մինչև քվեարկության սկսվելը հանձնաժողովի նախագահի հետ միասին լրացրեք (բացի առաջին ընտրողի տվյալներից) ստուգողական թերթի ինքնապատճենող ձևը: Ուշադրություն դարձրեք, որ ստուգողական թերթը ստորագրեն հանձնաժողովում ներկա բոլոր անդամները (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.10)

08:00 ժամից

- ☐ Տեղամասում առաջին ընտրողի ներկայանալիս՝ ընտրողը անցնում է գրանցում, ստանում է քվեաթերթիկը և դրանից հետո առաջին ընտրողի տվյալները մտցրեք ստուգողական թերթում (ստուգողական թերթի տվյալները մտցրեք Գրառումների գրքի 4- էջում)

09:00 ժամից

- ☐ Նշեք գրառումների գրքի 4-րդ էջին, թե քանի ընտրական քվեաթերթիկ և հատուկ ծրար փոխանցվեց շրջիկ քվեատուփին ուղեկցող հանձնաժողովի անդամներին (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 62.6)

12:00 ժամ

- ☐ Յուրաքանչյուր գրանցողի հետ միասին հաշվեք ընտրացուցակներում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների թվաքանակը և դրանց գումարը մտցրեք Գրառումների գրքի 6-րդ էջին և ցուցադրական արձանագրություններում:

17:00 ժամ

- ☐ Յուրաքանչյուր գրանցողի հետ միասին վերահաշվեք ընտրացուցակներում քվարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների թվաքանակը և դրանց գումարը մտցրեք Գրառումների գրքի 6-րդ էջում և ցուցադրական արձանագրություններում:

<u>20:00 ժամից մինչև քվեատուփի բացումը</u>

- ☐ Գրառումների գրքի 4-րդ էջին մտցրեք 20.00 ժամի համար հերթում կանգնած ընտրողների թվաքանակությունը

- ☐ Քվեարկության ավարտումից հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի և ընտրողներին գրանցողների կնիքների վրա կատարում է երկրորդ հատվածախուցը: Արտացոլեք Գրառումների գրքում նշված կնիքների նմուշները (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.1)

- ☐ Գրառումների գրքի 3-րդ էջին նշեք հանձնաժողովի անդամների միջև հաշվողների գործառույթների վիճակահանությամբ բաշխման արդյունքները

- ☐ Քվեարկության օրվա Գրառումների գրքի 3-րդ էջին մտցրեք ընտրական քվեաթերթիկները հաշվելու գործընթացը դիտարկելու նպատակով դիտորդներից բացահայտված դիտորդների տվյալները

- ☐ Քվեարկության օրվա Գրառումների գրքի 3-րդ էջում մտցրեք վիճակահանության արդյունքում բացահատված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների տվյալները, ովքեր հաշվողների հետ միասին մասնակցում են վավերական (իսկական) կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկները հաշվելու գործընթացին

- ☐ Գրառումների գրքում նշեք ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող անձանց ով լինելը

- ☐ Համընդհանուր ընտրացուցակի, հատուկ ցուցակի և շրջիկ քվեատուփի ցուցակի համաձայն, հաշվողների կողմից բացահայտված քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվաքանակը (գրանցողների բացատրագրերում մատնանշված տվյալների հաշվառումով, այդպիսինի գոյության դեպքում) ամրագրեք Գրառումների գրքում և Ցուցադրական արձանագրություններում ((Ընտրական օրենսգիրք՝ Հոդված 67.3)

- ☐ Առանձին-առանձին փաթաթեք և զմռսեք համընդհանուր, հատուկ և շրջիկ քվեատուփի ցուցակները (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.3): Զմռսած փաթեթները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հաշվողները

- ☐ Չօգտագործված ընտրական քվեաթերթիկների անկյունը կտրեք: Չօգտագործված և վնասված ընտրական քվեաթերթիկները ծալեք առանձին-առանձին ծրարներով (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.4): Զմռսած տոպրակները ստորագրում են

հանձնաժողովի նախագահը և հաշվողները:

Քվեատուփի բացում, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների կազմում

- ☐ Քվեատուփը բացելուց հետո հաշվողների կողմից հաշվված անվավեր քվեաթերթիկների և ընտրական սուբյեկտների ստացած ձայների թվաքանակությունը մտցրեք Գրառումների գրքի և ցուցադրական արձանագրությունների մեջ (այլ ընտրական տեղամասին պատկանող անվավեր ընտրական քվեաթերթիկների թվաքանակությունը նշվում է միայն գրառումների գրքում) (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 69.6; 69.8)

- ☐ Հանձնաժողովի նախագահի հետ միասին ստուգեք ամփոփիչ արձանագրությունների ճշտությունը. Սուբյեկտների կողմից ստացված ձայների թվաքանակության + անվավեր քվեաթերթիկների թվաքանակը = կամ < ստորագրությունների թվաքանակից

- ☐ Հաշվողների կողմից ձայները հաշվելու արարողակարգի ավարտումից հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ՝ Լրացրեք քվեարկության արդյունքների Ամփոփիչ արձանագրությունները (Ընտրական օրենսգիրք՝ Հոդված 71.1): Արձանագրությունները կազմելիս՝ հաշվի պետք է առնվեն գրանցողների բացատրագրերում (այդպիսինի գոյության դեպքում) մատնանշված տվյալները: Հիշեք. Արգելված է ամփոփիչ արձանագրություններում մտցված տվյալների ուղղումը (Ընտրական օրենսգիրք՝ Հոդված 70.3)

- ☐ Ստորագրեք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և հետևեք, որ հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրեն այս արձանագրությունները: Արձանագրությունը վավերացրեք հանձնաժողովի կնիքով և գրանցում անցկացրեք Գրանցամատյանի «Տրված փաստաթղթերի » մասում (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 71.4)

- ☐ Քվեարկության արդյունքները ափոփելուց հետո փակեք Գրառումների գիրքը և Գրանցամատյանը համապատասխան գրառումով «Մատյանը փակված է », վավերացրեք ձեր և հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ, որից հետո հաստատեք դրանք հանձնաժողովի կնիքով (Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 11. 15; (Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 62.11 71.12)

Ի նկատի ունեցեք!

- ✓ Հանձնաժողովի անդամների միջև վիճակահանությամբ սահմանված գործառույթները այլ անդամներին ժամանակավոր փոխանցելու դեպքում, տեղեկատվությունը ամրագրեք Գրառումների գրքի 5-րդ էջում *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 62.9գ)*
- ✓ Դրոշմակնքման ընթացակարգը ստուգելիս, եթե ընտրողի մոտ բացահայտվի դրոշմակնքում, նրա ով լինելը մտցրեք Գրառումների գրքի 4-րդ էջում
- ✓ Գրանցամատյանում և Գրառումների գրքի 10-րդ և հաջորդ էջերին գրանցում անցկացրեք բոլոր մտած դիմում/բողոքները *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 62.9)*
- ✓ Ամփոփիչ արձանագրությունների պատճեն տալիս պատճեն գրանցում անցկացրեք Գրանցամատյանում, վավերացրեք այն տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով և հանձնաժողովի նախագահի հետ միասին ստորագրեք այն *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 71.8)*